

ԿՐԿԻՆ ՄԱԿԱՐԵԱՆԻ «ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՏԻՐՈՅԹՆԵՐՈՒՄ»*

Բանալի բառեր – գրականագիտություն, Ալբերտ Մակարեան, դասաւանդման խնդիրներ, նոր շրջանի գրողներ, գրականագիտական միտք:

Ընթերցողի սեղանին է վաստակաշատ գրականագէտ Ալբերտ Մակարեանի նոր՝ «Գրականագիտութեան տիրոյթներում» յօդուածների ժողովածուն, որը հեղինակի գիտական նախասիրությունների եւ նորի ու անսովորի փնտռուքի վկայութիւնն է:

Եթէ փորձենք բովանդակային դասդասումի ենթարկել աշխատութիւնը, ապա կարող ենք որսալ առնուազն երեք շերտ:

Առաջինը եւ մեր նշած նորի դրսեւորումներից մէկը վերաբերում է դասաւանդման խնդիրներին: Այս առումով հետաքրքիր լուծումներով առանձնանում է ««Վէրք Հայաստանի» վէպի դասաւանդման մի քանի հարցեր» յօդուածը: Մեթոդական հարցերին զուգահեռ, երբ կարելու է, թէ յատկապէս ինչին պէտք է ուշադրութիւն դարձնել նիւթը մատուցելիս՝ հայրենիքի եւ անձնական ցաւի յարաբերակցութիւն, պատմաքաղաքական իրադրութիւն եւ կողմնորոշումներ, կառուցուածքային հարցադրումներ, «Յառաջարան»-ի ձիշղ ընթերցման պահանջ, իրական, հոգեբանական փաստերի համադրում եւ այլն, հեղինակը գրականագիտական նուրբ դիտարկումներ է անում, որոնք վերաբերում են վէպի խորագրի ընտրութեանը, «ողբ»-ի ժանրային իրացումներին, ռուսների հետ հայերի յարաբերութիւնների ոչ միանշանակ բնոյթին՝ մեկնաբանութիւններում վկայակոչելով Խաչատուր Աբովեանի՝ քննութեան ենթակայ բնագրերը¹: Ի դէպ, խորագրային բացատրութիւնների նմանօրինակ նախապատուութիւն տեսնում ենք նաեւ Պարոնեանին նուիրուած հատուածում՝ «Թատրոն» պարբերականի առնչութեամբ (էջ 86): Ինչ վերաբերում է Աբովեանին, նկատենք, որ ուշագրաւ են ոչ աւանդական մօտեցումները «Վէրք Հայաստանի» վէպի դասաւանդման պրոցեսում, յատկապէս ողբի, յառաջարանի, ընծայականի հարցերում դասաւանդողի համար հետաքրքիր յուշումների տեսանկիւնից:

* Ընդունուել է տպագրութեան 25.01.2022:

1 Տե՛ս Մակարեան Ա. Ա., Գրականագիտութեան տիրոյթներում, Եր., «Արմա» հրատ., 2021, էջ 7: Այս գրքից մէջբերումների էջերն այսուհետեւ կը նշուեն շարադրանքում:

Ուսուցման առանձնայատկություններին նուիրուած մէկ այլ ուսումնասիրութիւն է «Դերենիկ Դէմիրճեան. «Աւելորդը» (դասաւանդման մի քանի խնդիրներ)» յօդուածը: Ըստ էութեան, սա գրողի ամբողջական ներկայացման արդիւնատր փորձ է, գրական դիմանկարի վերհանում մէկ ստեղծագործութեան միջոցով, ուղղորդում ուսուցչին եւ դասագիրք կազմողին, հեղինակին եւ նրա ստեղծագործութեանը ուշադրութիւն դարձնելու յորդոր՝ կազմուած 6 դասի նմուշ-օրինակներից: Աւելորդ չենք համարում նշել, որ մեթոդական բնոյթի այս աշխատանքները եզակի չեն Ալ. Մակարեանի գիտական մօտեցումներում: Բաւական է յիշել «Հայագիտական հանդէս»-ում տպագրուած նրա «Պետրոս Դուրեանի կեանքի եւ ստեղծագործութեան ուսուցումը բուհում» (2018, N 1 (39), էջ 100–110), «Այսէլ Բակունց. «Սպիտակ ձին» (դասաւանդման մի քանի խնդիրներ)» (2021, N 2 (51), էջ 168–186) եւ «Գուրգէն Մահարու ինքնակենսագրական վիպակների դասաւանդման շուրջ» (2021, N 3 (52), էջ 150–174) յօդուածները:

Գրքի քննական **երկրորդ** շերտը վերաբերում է զուտ գրականագիտական նիւթին եւ գերակշիռ մասով՝ նոր շրջանի հեղինակներին, որոնցից նախապատուութիւնը կարծես արեւմտահայ դէմքերի կողմն է՝ Հայր Ղեւոնդ Ալիշան, Պետրոս Դուրեան, Խորէն Գալֆայեան, Յակոբ Պարոնեան, Թագուհի Շիշմանեան, Երուանդ Օտեան: Աւելորդ չենք համարում նշել, որ Հայր Ղ. Ալիշանի դերը դժուար է թերագնահատել հայ նոր գրականութեան ձեւաւորման ու զարգացման հոլովոյթում: Նրա գրական ստեղծագործութեանը նուիրուած բաւական մանրամասն ուսումնասիրութիւնից յետոյ, մեր տպաւորութեամբ, փոքր-ինչ «թուլացնող» ազդեցութիւն ունի գիտականի կողքին գիտահանրամատչելի բնոյթի տեղեկութիւնների տրամադրումը՝ Նիկողայոս Քարամեանի, Թադէոս Թոմաճանի, Տիգրան Նազարեանի, Յովհաննէս Թորոսեանի եւ Հայր Սիմոն Երեմեանի՝ Հայր Ղ. Ալիշանին տրուած գնահատականների մէջբերումները Սուրէն Շտիկեանի աշխատասիրութեամբ լոյս տեսած «Ալիշանը ժամանակակիցների յուշերում» գրքից (էջ 38–39): Նկատել ենք նաեւ որոշ կրկնութիւններ, ինչպէս, օրինակ, Իսահակեանի հաւաստումը Հայր Ղ. Ալիշանի մասին (էջ 15 եւ 29):

Ալբերտ Մակարեանի գրապատմական նախասիրութիւնների յաջորդ հանգրուանը Պետրոս Դուրեանի ստեղծագործութիւնն է, առիթը՝ բանաստեղծի ծննդեան 160-ամեակը: Ուշագրաւն այս հատուածում գրականագիտական տեսութեան մի կարեւոր յատկանիշի վերհանումն է՝ խուսափումը բանաստեղծի ու նրա հանձարի հանդէպ անքննարկելի վերաբերմունքից, ինչը շրջանցել քիչ գիտնականների է տրուած: Խօսքը մասնաւորապէս թատերգութեանը տրուած գնահատականների մասին է: «Ի՞նչ նորութիւն էր բերում հայոց գրականութիւն Դուրեան թատերագիրը»,– հարցնում է գրականագէտը, եւ ինքն էլ անվարան պատասխանում. «Որքան էլ տարօրինակ

թուայ՝ բաւական համեստ...», քանի որ ժանրի գործերում տեսնում է «աւելորդ ճարտասանութիւն ու արկածային տարրեր, բախումների հապճեպ ու չպատճառաբանուած լուծումներ, յանկարծահաս մահեր...» (էջ 47): Դրան աւելանում է նաեւ հայ գրականութեան պատմութեան մէջ նիւթին դիմելու նախորդող փորձը (Մկրտիչ Պէշիկթաշլեան, Խորէն Գալֆայեան եւ այլք): Նորութիւն կամ նորարարութիւն Պ. Դուրեանի աշխարհում գրականագէտը, անշուշտ, որսում է, միայն թէ իրաւացիօրէն բանաստեղծութեան տիրոյթում, որն է՝ «հայոց բանաստեղծութեան զարգացման նոր շրջանում անձնական քնարերգութեան հունը» (էջ 53):

Հետաքրքրական դիտարկումներով է առանձնանում Խորէն Գալֆայեանի երկու երեսը՝ «մարդը եւ կատակերգակը», մանրամասն ուրուագծող ուսումնասիրութիւնը (էջ 55–81), որում, ամէն ինչից զատ, հեղինակին յաջողուել է վեր հանել հակասական այս գործչի, գրողի ու մարդու կերպարի ու գրականութեան արժէքային համակարգը: Մեզ համար գիտական հետաքրքրութիւնների տեսանկիւնից ուշագրաւ է կերպարի ամբողջացման ճանապարհին անդրադարձը նաեւ Մատթէոս Մամուրեանի «Հայկական նամականի»-ին (էջ 58):

Անհնար է պատկերացնել Ալ. Մակարեանի «գրականագիտական տիրոյթները» առանց Յակոբ Պարոնեանի հիմնաւոր ներկայութեան: Քանի որ ժամանակին առանձին գրախօսականով անդրադարձել ենք նրա «Կրկին Պարոնեանի հետ (սոր ընթերցումներ)» մենագրութեանը (Երեւան, 2018, Սուրէն Դանիէլեանի համահեղինակութեամբ)², այստեղ կը բաւարարուենք՝ նկատելով միայն, որ Պարոնեանին անդրադարձներն այս նոր գրքում մէկից աւելին են, ինչպէս՝ «Յակոբ Պարոնեանի «Ազգային ջոջերը» եւ ֆրանսիական «Պոլիշինել» երգիծաթերթը», «Յակոբ Պարոնեանի «Պաղտասար աղբար» կատակերգութեան առաջին գրախօսութեան իմացական արժէքը», «Բանասիրական մի ճշգրտում «Պաղտասար աղբար»-ի առիթով» (էջ 82–125): Իբրեւ երգիծանքի նախապատուութեան շարունակականութեան վկայութիւն կարող ենք դիտարկել «Երուանդ Օտեանի «Մեր երեսփոխանները» պատմական լոյսի ներքոյ» յօդուածը, որում ներկայացուած են դիմանկար կերտելու օտեանական իւրայատկութիւնները:

Բաւական ընդգրկուն ուսումնասիրութեան արդիւնք է «Թագուհի Շիշմանեան՝ արեւմտահայ գրականութեան կորուսեալ ասուպը» աշխատանքը, որում շարադրանքի ամբողջացման համար հիմնական ատաղձ են ծառայում նամակները: Այս հատուածն աչքի է ընկնում նաեւ արխիւային նիւթերի շրջանառութեամբ, ինչը եւս պէտք է դիտել իբրեւ գրականագիտական պատասխանատուութեան ու բանասիրական մանրակրկիտ աշ-

2 Տե՛ս «Վէմ» համահայկական հանդէս, Եր., 2019, N 1 (65), էջ 223-229:

խատանքի վկայութիւն: Պատահական չէ, որ այս ուսումնասիրութեան մէջ առանձնացուած է «Նամակներ եւ յուշագրութիւն» վերնագրով ենթաբաժին (էջ 156-162): Այս համատեքստում երկրորդական չէ նաեւ արեւմտահայ գրողի նախասիրութեան ընդգծումը արդէն «Գարնան մի ասուպ»-ում էպիստոլեար ժանրի ներմուծման առիթով, ինչը նկատում է եւ գրականագէտը (էջ 175): Նկատենք նաեւ Ալ. Մակարեանի հոգածու վերաբերմունքը գրողի բնագրերի մշակման հարցում: Խօսքը նրա աշխատասիրութեամբ լոյս տեսած «Երկեր: Գարնան մի ասուպ, քրոնիկներ, յիշողութիւններ, նամականի» հատորի մասին է (Երեւան, 2015):

Արեւմտահայ գրականութեան արժեւորման ճանապարհն անփոփում է «Զապէլ Եսայեանի «Միլիհտարի պարտէզները»» յօդուածով, որը նաեւ վերջերս հրատարակուած հատորի վերջաբանն է (Երեւան, 2018): Հեղինակային վրձնահարուածների գեղեցկութիւնը ցուցադրելու համար այս հատուածում բաւական տեղ է հատկացուած բնագրային մէջբերումներին (էջ 189-190), ինչը գրականագէտն ինքն էլ հարկ է համարում «արդարացնել» «վերոբերեալ ընդարձակ հատուած» նշումով՝ ընդգծելու համար, որ Զապէլ Եսայեանի երկերում նկարագրութիւններին յաջորդում է «գնահատական-անփոփումը» (էջ 191): Այս ուսումնասիրութեան մէջ մեզ գրաւել են նաեւ տեսաբանական դատողութիւնները, որոնք վերաբերում են յատկապէս «Յակոբ մօրեղբայրս» պատմուածքի եւ վէպի «Խաչիկ մօրեղբայրս» հատուածի խորագրերի ու ժանրային անցումների պատճառահետեւանքային կապին (էջ 193):

Ալ. Մակարեանի «Գրականագիտութեան տիրոյթներում» ժողովածուի երրորդ հանգրուանը գրականագիտական մտքի արժեւորումներն են, որտեղ հեղինակը առանձնակի սիրով ու նուիրումով է երեւան բերում իր ուսուցչի՝ Հրանդ Թամրազեանի կերպարը: Այստեղ խօսքը կառուցում է՝ հիմնուելով վերջինիս «Յուշերիս հետ» յուշապատումի վրայ, եւ աւելի ազատ է «մտերմական» ու մարդկային բնութագրի առումով: Միաժամանակ մարդու ու գիտնականի դաշինքի վերհանման ճանապարհին գրականագէտը մեծապէս յենում է նաեւ իր անձնական փորձառութեան վրայ:

Գիրքը եզրափակող՝ Ս. Դանիէլեանի «Միջուկի տրոհումը. սփիւռքահայ գրականութեան պատմութիւն. ներածութիւն» ուսումնասիրութեան Ա հատորին նուիրուած «Տրոհուած միջուկի յայտնութիւնը» գրախօսականում Ալ. Մակարեանը եւս մէկ անգամ գալիս է հաւաստելու այն ճշմարտութիւնը, որ գրականագիտական-մասնագիտական երկխօսութեան ճանապարհին կարելի է որսալ մանրամասներ, որոնք թերեւս ինքը՝ քննաբանուող հեղինակը, ներկայացրել է ենթագիտակցօրէն: Այս հատուածն ուշագրաւ է նաեւ նրանով, որ Ս. Դանիէլեանի դիտարկումների կողքին Ալ. Մակարեան-

նը բերում ու նրբօրէն միահիւսում է գրականագիտական ի՛ր նուրբ դիտողութիւնները:

Ամփոփելով նշենք, որ որքան էլ քննութեան դաշտն ու հեղինակները տարբեր են՝ հայ նոր գրականութեան ձեւաւորման եւ ժոմանտիկական աշխարհընկալման շրջանից (Հայր Ղ. Ալիշան, Պ. Դուրեան) մինչեւ ռէալիստական մտածողութեան եւ երգիծանքի հունաւորման ու զարգացման ճանապարհը (Յ. Պարոնեան եւ Ե. Օտեան), մինչեւ սովետահայ գրականութեան հարցադրումները (Զ. Եսայեան ու Դ. Դէմիրճեան), մինչեւ «գրականագիտութեան տիրոյթները» (Հր. Թամրազեան, Ս. Դանիէլեան), այնուամենայնիւ, հասարակաց, բնութագրական գիծը Ալբերտ Մակարեանի գիտական ու բանասիրական կարգապահութիւնն է, աղբիւրագիտութեան նկատմամբ պատասխանատուութիւնը, նիւթի մատուցման հարցում գիտնականի կողքին ընթերցողին ուղղորդելու մանկավարժ-խորհրդատուի կարեւոր յանձնառութիւնը:

Քնարիկ Ա. Աբրահամեան
Բանասիր. գիտ. թեկնածու

Քնարիկ Ա. Աբրահամեան – գրականագէտ, հեղինակ է մէկ մենագրութեան եւ երեքուկես տասնեակի հասնող յօդուած-ուսումնասիրութիւնների: Կազմել եւ խմբագրել է Սփիւռքի գրականութեանը վերաբերող տասնեակ գրքեր: Գիտական հետաքրքրութիւնների շրջանակն ընդգրկում է արեւմտահայ դասական եւ սփիւռքահայ գրական հարցադրումները, օտարագիր գրականութիւնը եւ նամակագրութիւնը:

Էլ. հասցէ՝ spyurkka@gmail.com

Summary

AGAIN IN MAKARYAN'S "FIELDS OF LITERARY CRITICISM"

Knarik A. Abrahamyan
Candidate of Sciences in History

Key words – literary criticism, Albert Makaryan, teaching problems, writers of the new period, literary thought.

The article is dedicated to the analysis of Albert Makaryan's collection "In the fields of literary criticism". The author has classified three main thematic directions such as the teaching problems (Khachatour Abovyan, Derenik

Demirchyan), the questions of the writers that mainly cover the new period (Ghevond Alishan, Khoren Ghalfayan, Petros Duryan and others) and feedback on literary thought (Hrant Tamrazyan, Suren Danielyan).

Along with the problems of teaching in a methodological perspective (what to teach, how to teach and what to pay attention to) Albert Makaryan also presents remarkable literary observations. On the one hand they are related to Khachatur Abovyan's novel "Wounds of Armenia", on the other hand to Derenik Demirchyan's short story "The Redundant". We have also noticed that these reflections on the teaching problems are not unique. Let us remember his articles devoted to Petros Duryan, Aksel Bakunts, Gurgen Mahari in scientific periodicals.

In pure literary articles we notice the preference given to Western Armenian writers. It should not be forgotten that in the publications of the books of Taguhi Shishmanyana and Zabel Yesayan, Albert Makaryan has a significant role in terms of both composition and donation of analytical pages.

And here in the assessment-reviews dedicated to literary critics Hrant Tamrazyan and Suren Danielyan interesting experience on conducting professional dialogues is presented.

The conclusion is that in all cases Albert Makaryan has shown his scientific and philological discipline.

Based on the analysis, the conclusion was drawn: in all cases, Albert Makaryan showed scientific and philological disciplinary literacy.

Резюме

СНОВА О «ЛИТЕРАТУРОВЕДЧЕСКИХ СФЕРАХ» МАКАРЯНА

Кнарлик А. Абраамян
Канд. филолог. наук

Ключевые слова - литературоведение, Альберт Макарян, проблемы преподавания, писатели нового периода, литературоведческая мысль.

Статья посвящена анализу материалов сборника Альберта Макаряна «Литературоведческие сферы». Автор выделил три основных тематических направления: проблемы преподавания (Хачатур Абовян, Дереник Демирчян), вопросы писателей, творчество которых в основном охватывало новый период (Гевонд Алишан, Хорен Галфаян, Петрос Дурян, Акоп Паронян и

другие) и отзывы на литературоведческие мысли (Грант Тамразян, Сурен Даниелян).

Наряду с проблемами преподавания в методическом ракурсе (что учить, как учить и на что обращать внимание) Альберт Макарян представляет также свои литературоведческие наблюдения, которые в одном случае относятся к роману Хачатура Абовяна «Раны Армении», а в другом – к рассказу Дереника Демирчяна «Лишняя». Мы заметили, что автор обращается к проблемам преподавания не впервые. Вспомним опубликованные в научных изданиях статьи, посвященные Петросу Дуряну, Акселу Бакунцу, Гургену Маари.

Непосредственно в литературных статьях мы замечаем, что А. Макарян отдает предпочтение западноармянским писателям. Не следует забывать о том, что в издании книг Тагуи Шишманян и Запел Есяян существенное место занимают работы А. Макаряна как в плане составления, так и в плане анализа и критики произведений.

В оценках-рецензиях, посвященных творчеству литературоведов Гранта Тамразяна и Сурена Даниеляна, А. Макарян поделился интересным опытом ведения профессионального диалога.

На основе анализа материалов сборника А. Маркаряна можно сделать следующий вывод: во всех рассмотренных случаях автор проявил научную и филологическую дисциплинарную грамотность.

REFERENCES

1. **Makaryan A.**, Grakanagitut‘yan tiruyt‘nerum, Yer., “Arnav” hrat., 2021 (**In Armenian**).
2. “Vēm” hamahykakan handes, Yer., 2019, N 1 (65) (**In Armenian**).